

աւազակք որ լերան վրայ կը թափառէին զինքը բռնէր էին մինչդեռ հագուած սպուած իր մօրը և փեփոն հետ կ'ուղևորէր: Քարերն 'ի գուծ շարժելու շափ կ'աղաղակէր, բայց զինքը միտթաւ կեցին խոստանալով ազատ թողուլ տասնուհինգ օրէն և վարձը հատուցանել: Համակամեցաւ քաջութեամբ և գրեթէ կ'ուրախանար իսկ այս գոթաղուծեան վրայ որ իր օժիտը պիտի յաւելլէր: Բարեբաղդ երկիր՝ ուր սրտի վէրքերն հինգ Փրօնրով կը բժշկուին: Այս իմաստասէր աղախինն Սիմօն Տիկնոջ մեծ օգնութիւն մը չըրաւ, իւր սեռին վերաբերեալ աչխատութիւններէն միայն հողագործութիւն գիտէր, իսկ ինչ կեանքս անտանել ըրաւ: Վասն զի սովորութիւնն ունէր խստոր կրծեղով՝ իբրև քաղցուենի և միանգամայն պշտանացնիւթ, ինչպէս Համպուրկի կանայք ակռաներուն տակ շաքարներ կտրսեւելով կ'ըշքանուն:

Սրն անցաւ առանց ուրիշ դէպք մը հանդիպելու: Սրկորոգ օրուան երկայնութիւնն ամենուս անտանելի եղաւ: Քորֆուցին վայրկեան մ'ալ զեզ շէր թողոր: Մարիաննա և իւր մայրն հորիղունքի վրայ զսպայակոյտը կը դիտէին և բան չէին տեսներ: Իսկ ես որ գործունեայ կենաց վարժեր եմ, անգործութեան վիճակիս մէջ ինքզինքս կ'ուտէի:

Շարունակելի

Կրնայի՛ հակողութեան ներքև՝ լերան վրայ սաքին անգին երթալ և բոյսեր հաւաքել, բայց չեմ գիտեր ինչ բան զիս այս կանանց քով կը բռնէր: Գիշերն աղէկ չէի քնացած. փախտեան գաղափարն միշտ մտքիս մէջն էր. տեսեր էի Քորֆուցին պտակէլէն առաջ իւր գայլոյնը դրած տեղը . բայց մտնութիւն ըրած կը համարէի եթէ առանց Մարիաննայի ինքզինքս ազատէի:

Ետքս թառառոն ժամը վեցին ձտերը՝ անտ վոր ազմուկ մը զիս դէպ 'ի թաղաւորին սենեակը հրաւիրեց: Սնմիջապէս զգեստաւորեցայ, որովհետև առանց հանուելու անկողին կը մտնէի:

Հաճի՛-Սգաւորս իւր խմբին մէջ ոտքի վրայ՝ աղմկայոյղ ժողովքի մը գլուխ կեցեր էր: Իւլլօր աւազակներն զինեալ՝ պատերազմի պատրաստուէր էին: Տասն կամ տասուերկու արկեղք, զորս ամենին չէի տեսած, սայլերու վրայ դրեր էին: Գուշակեցի որ անոնց մէջ կահ կարասիք պիտի լինին, և թէ մեր տեաք բանակը փոխադրելու կը պատրաստուէին:

Քորֆուցին, Վասիլ և Սոփոկլէս կարգէ դուրս աղաղակաւ խորհուրդ կ'ընէին, և ամենը ալ միանգամայն կը խօսէին: Հետուէն յառաջապահ խմբին (շանց) հասնելու կը լուռէր: Պատառատուն զգեստներով սուրհանգակ մը առ թագաւորն վազելով աղաղակեց. Սպայակոյտն:

Ե. ԱՊՈՒ

Մ Ա Ն Ր Ա Վ Է Պ

Մ Ի Օ Ր Ե Ս. Յ Թ Ա. Գ Ա. Ի Ո Ր



Իլիպպոս Գալն, դուքս Պուրկոյնի, կոմս Ֆիանարիոյ, իշխան հարաւային Ստորին-Նահանգաց, և Պաւիէրայի Յակոբիկի հրաժարելով Վըն՝ կոմս Հօլանտայի, Չելանտայի, և Ֆրիդի, գնաց այս նոր ժառանգած երկիրներուն հպատակներէն հաւատարմութեան երգումն ընդունելու համար: Իրեն հետ էր նաև իղպակլա իւր նորահաս ամուսինն, որոյ 'ի պատիւ մեծամեծ հանդէսներ տուաւ, Հօլանտայի Լա-Հէյ քաղաքին արքունական պալատին մէջ:

Այս զուարճութեանց ժամանակ, հանդիպեցաւ նաև դիպուած մը, որոյ դիւցազն էր գլինեմոլ մը, որ և իր բովանդակ կենաց ընթացքին մէջ բոլոր քաղաքը կը գայլթակղեյընէր: Եւ այս դէպքս շատ անգամ ներկայացուցուած է թատրոններու մէջ, բայց միշտ մեծ փոփոխութեամբ: Հայրն Տիւսէրսօ դըպրոցական գեղեցիկ կատակերգութեան վերածած է: Իսկ մենք այս եղաւկան դէպքս հաւատարմարար կը ներկայացընենք, հիմնեալ ստուգապատում՝ աւանդութեանց վրայ:

* * *

լա-Հէյ քաղաքին Գուրթ-Փութ փո-
զոցին անկիւնը՝ խանութ մը կար, ու
րուն մէջ ուրախութեամբ կ'ապրէր
Վիլլէմ անուամբ երիտասարդ պատա-
նի մը, որ արուեստով հնակարկատ էր.
և այնպէս աշխուժութեամբ և ջանքով
կ'աշխատէր՝ որ շատ մեծ գիւրութեամբ
կը պահէր թէ ինքզինքը և թէ իւր մայ-
րը՝ որ իրմէ զատ ուրիշ նեցուկ չունէր:
Թէպէտ և երեսուն տարեկան էր՝ բայց
դեռ չէր ամուսնացած. և պատճառը՝
վասն զի զբացուող խոհմբ՝ երիտասարդ
օրիորդները՝ չէին ախորժեր այնպիսի
փեսայ մը՝ որ շար ունակութիւններ
ունէր: Վիլլէմ ամէն տօն և կիրակի
օրերը՝ մեծ զուարթութեամբ կ'անջը-
նէր, և հասարակաց զուարճութիւննե-
րը միշտ իր քօսակը կը դատարկէին:
Եթէ իշխանաց մին կոչուիք և կամ պա-
րահանդէս մը տար, իր անձին պարտք
կը համարէր ըմպել իրենց կենաց հա-
մար զինեաանց մէջ: Իր մայրը, յետ
այնքան անօգուտ յանդիմանութեանց՝
ալ ձայնը դադրեցուց որդւոյն շար ու-
նակութեան վրայ, վասն զի Վիլլէմ իր
քրտինքով և աշխատութեամբ ամե-
նայն կերպով իր որդիական պարտքը
կը կատարէր:

Արդ Բաջին փիլիպպոսի տուած չքեղ
հանդէսներուն ժամանակ, Վիլլէմ, ու-
րուն ամէն իշխանները սիրելի էին,
կը կարծէր որ արքունեաց ուրախու-
թեանց մէջ ինքն ևս զլուսաւոր մաս
մ'ունէր. և ձեռքը բանի մը Ֆուանք
ունենալով, զորս մեծ զուշուրութեամբ
կը ծածկէր մօրմէն, սխառ ուրախու-
թեամբ խմել, ցուցնելով որ ինքն ալ
կը մասնակցէր իւր իշխանին ուրախու-
թեանց, ամէն անգամ բաժակը նորա
կենաց համար դատարկելով:

Գուքսն փիլիպպոս, եզական ընու-
թիւն և վառվառուն երևակայութիւն ու-
նէր, և գիշեր ժամանակ շրջագայու-
թեան ելելու շատ հաճոյք կը զգար, ա-
ռանց բազմաթիւ հետևորդաց, զգես-
տաւորեալ իբր քաղաքական անձ մը:

Թէ իր աչքով քաղաքին պահպանու-
թիւնը և գիրքը դիտելու, և թէ քիչ
մ'ալ իշխանական զբաղանքներէն ա-
զատ լինելու համար: Այս ոճով կը
վարէր Հարուն-էլ-Իեշիտ երեւելի ամի-
րայն, Հազար և մի գիշերաց դիւցազն
և 'ի Սպանիա Պետրոս-Արդարասէրն,
և Զգօնն-Կարողոս 'ի Գաղղիա. նոյնպէս
ըրաւ քիչ վերջը նաև Կարողոս-Հին-
դերորդ:

Նոյն գիշերը՝ ուր թողուցինք զՎիլլէմ
սեղանի վրայ, փիլիպպոս Գաջն ալ կէս
գիշերուան ատենները, տեսնելով երկ-
նից պարզութիւնը և լուսնի պայծա-
ռութիւնը, շրջագայութեան ելաւ, անց-
նելով Պիննէնհօֆ՝ անձանօթ դռնէն
դէպ 'ի վուրհուիթ ծառազարդ ուղին:

Ընկերացեր էին իրեն նաև երեք
սպայք, ժաքօթ տը Ռուսէ, Հիւ տը
Լաննուա և Յովհաննէս տը Պէրկ:

Յետ շրջագայութեան, գիշերուան
զովութիւնը դիրենք կը ստիպէր քիչ մը
երազ քաշելու. բայց փիլիպպոս յան-
կարծ տեսաւ ծառի մը տակ պառկած
մարդ մը՝ անյարժ ամենին:

— Անկարելի է, ըսաւ, որ այս մար-
դը այսպէս անպատասպար քնանայ այս
զով տանն: Արդեօք սպանութիւն մը
եղած է:

— Սպանութիւն չի լինիր լա-Հէյի
մէջ, պատասխանեց Յովհաննէս տը
Պէրկ:

Փիլիպպոս մտենալով մարդուն՝ ոտ-
քը շարժեց, բայց ամենին կենդա-
նութեան նշան մը չտուաւ: Կոչեց. —
մարդը պատասխան չտուաւ:

— Տեսէք, Պարոնայք, մեռած է՝ թէ
ոչ, ըսաւ իշխանն:

Հիւ տը Լաննուա, դիտեց և տեսաւ
որ սիրաը կը բարախէր, և հարուածի
կամ ծեծի նշան չէր տեսնուեր:

— Այս մարդս կարծեմ թէ գինով
է, ըսաւ ժաքօթ տը Ռուսէ:

Լրացեալ լուսինը իր ճառագայթնե-
րովը՝ ննջող անձին երեսը կը լուսաւո-
րէր. Յովհաննէս տը Պէրկ վայրկեան
մը գիտելով աղաղակեց.

— Կ'երգնում, Տէր իմ, որ այս անձն

է զուարթն Վիլլէմ, անշուշտ այսօր
Չեր Բարձրութեան կենաց համար ա.
ուսուութեամբ խմբեր է :

Փիլիպպոս Գալն ուրախանալով որ
ոճիր մը չէր գործուած, և զուարճանա.
լով Վիլլէմի բնաւորութեան վրայ, յան.
կարծակի տարօրինակ դաղափար մը
յայտնեց :

— Այս խեղճ մարդուն վրայ կարեկ.
ցինք, ըսաւ իշխանը . և վասն զի իմա.
ցանք որ ուրախութիւն կը սիրէ՝ կը
փափաքեմ որ վաղը ներկայ ըլլոյ հան.
գիսի մը, զոր և ոչ իսկ այժմ՝ կ'երազե.
նաւ զմեզ ալ կը զբաղեցընէ և բոլորո.
վին նոր կերպով մը կը զուարճացընէ
մեր ամուսինը : Պարոնայք, տանինք
այս ննջողը մեր պալատը, և վաղը շատ
պիտի զուարճացընեմ զձեզ :

Յովհաննէս տը Պէրկ և Հիւ տը Լան.
նուա զետեղեցին զՎիլլէմ՝ Ժաքօթ իտա.
սէյի աքիլլանման ուսոց վրայ, զոր և
տարուա Հոլանտայի կոմսին պալատը,
առանց թշուառականին արթըննալուն :
Վիլլէմի տյերնս մեծածայն խորդալուն
Քալն փիլիպպոս շատ կը զարմանար.
և կ'ուրախանար մտածելով մանաւանդ
այն զուարճութիւնը՝ զոր պիտի առ.
թէր այս գիպուածս :

Երբ կոմսին պալատը հասան, Վիլլէ.
մի հնոտի ձորձիկը հանեցին, անուշա.
հոտ ջրով լուացին ձեռքերը, Հարլէմի
գործատան մէջ շինուած ամենաբա.
րակ ասղնեգործ շապիկ մը հագցու.
ցին, և զուխը զրին մետաքսեայ գի.
շերնոց մը : Յետոյ հանգչեցուցին զին.
քը՝ Քալնի փիլիպպոսի անկողնոյն մէջ.
սակայն այս գործողութեանց ժամա.
նակ այն թշուառականը՝ կարծես թէ
օտտանայէ դիւթուած՝ ամենեկին ար.
թըննալու նշան մի չտուաւ : Իշխանն և
իրեն պաշտօնակալներն սակաւ ինչ
ժամանակ հանգչելու գնացին, ապա.
հով որ այն երիտասարդ ննջողն յա.
ռաջ քան զուսանալ պիտի չարթնա.
նայր, իշխանին փեսաբալից և շքեղ ան.
կողնոյն մէջ :

Իզպպէլլա՝ Քալնի փիլիպպոսի իշխա.
նուհին, իր նաժշտաց հետ կը սպասէր

իշխանին գալստեան . բայց երբ իմա.
ցաւ ուշանալուն պատճառը, թէպէտ և
բնութեամբ լուրջ էր, սակայն ծիծա.
ղը չկրցաւ բռնել, մտածելով որ հնա.
կարկատին արթըննալը՝ իրեն մեծ զը.
ւարճութիւն պիտի պատճառէր :

* *

Յաջորդ առաւօտը՝ արշալուսոյն ա.
տեն, իշխանն և իշխանուհին ամենա.
պարզ զգեստաւորեցան, և իրենց շքեղ
և երևելի պալատականաց մէջ խառ.
նուելով՝ կ'երթային Վիլլէմի հանգչած՝
ընդարձակ, զարդարուն, ոսկիապատ և
թաւաղաքար սրահը :

Թշուառականն Վիլլէմ դեռ ևս կը շա.
րունակէր քնանալ :

Պուրկոյնի մարալխան՝ իւր շքեղ
պաշտօնական հագուստով, մտեցաւ
անկողնոյն, և թեթև կերպով դինովին
ուսը գրդեց : — Տէր իմ, ըսաւ, Չեր
Բարձրութեանն արթըննալուն սովորա.
կան ժամն հասած է :

Եւ զարմանալու չէ այս խօսակցու.
թեան եղանակին վրայ, վասն զի Քալն
փիլիպպոս՝ կը փափաքէր այնպէս կար.
ծեցընել տալ այս խեղճ մարդուն՝ թէ
ինքն է իշխանն :

Բայց երբ Վիլլէմ պատասխան չը.
տուաւ, իշխանին սենեկապան սպայն
ձեռքը բռնեց, և թեթև կերպով մը
սեղմեց զայն՝ արթընըննելու համար :

Վիլլէմ՝ կէս քուն կէս արթուն, ըստ
իր սովորութեանը սկսաւ ուժով ուժով
չփել աչքերը, և յետոյ մեծաբաց նա.
յուածքով չորս կողմը ապշած նայե.
ցաւ, անտարակոյս համոզուելով որ
քաղցր երազի մէջ է . միւս կողմը դառ.
նալով սկսաւ դարձեալ քնանալ, թե.
թև մը ժպտելով : Բայց որպէս զի զինքն
արթընցընեն՝ կրկին անգամ ուժով մը
ղրղեցին և արթնցուցին . և դարձեալ
մտանալով Վիլլէմի՝ Պուրկոյնի մարա.
լխտան՝ ըսաւ .

— Վեհափառ Տէր . . .

— Հը . . . պատասխանեց Վիլլէմ
զողալով . Վեհափառ Տէր . . . որուն

հետ կը խօսիս . միթէ իշխանն հոս է :
Դարձեալ ինքը ձեռքով աչքերը շիւ-
րով, նայեցաւ շուարած իր չորս կողմը,
և զարմանալով տեսածներուն վրայ,
եթէ երազ է, կ'ըսէր ինքնիրեն, շատ
աղէկ երազ է . այս ըսելով կանգնե-
ցաւ անկողնոյն մէջ :

— Վեհափառ Տէր, ըսաւ ծանր
շարժուածքով Պուրկոյնի մարաջխան,
ահաւասիկ հասած է Ձեր Բարձրու-
թեան ելլելու ժամը :

— Վեհափառ... Տէր... կրկնեց
Վիլլէմ, դարձեալ ինքնիրեն . Տէր...
արդեօք ո՛ւր կը գտնուիմ :

Իսկոյն՝ առանց պատասխանի սպա-
սելու, սկսաւ շոշափել իւր անկողնոյն
գեղեցիկ վարագոյրները, ազնեզործ
հարուստ վերմակը, բեհեզեայ սա-
ւանները, իր հագած արքայական շա-
պիկը . մետաքայ գլշերնոցը հա-
նեց, նայեցաւ ձեռքերուն, և զգաց որ
անուշահոտ իւղերով լուացեր էին, և
որ մինչև այն ատեն անուշահոտութիւ-
նը կը բուրէր :

— Ես ո՞ւր եմ, կրկնեց, և այս տե-
սածներս ի՞նչ են :

Ձեր տեսներ ո՛չ իւր սիրելի գինե-
տունը, ո՛չ խանութը և ո՛չ կաշուց կտու-
րուանքները, որ շատ անգամ փափա-
քած նպատակին պզտիկ գալով ինքը
ուժով ուժով կը քաշէր բերնով և կ'եր-
կընցընէր . արդ ինքնզինքը կը զննէր և
կը շոշափէր՝ թէ արդեօք ինչէն է Վիլ-
լէմ :

— Վերջապէս, ըսաւ ինքնիրեն, բան
տի մէջ եմ . բայց գէշ բան չէ :

Իրեն արթննալուն հանդիսատեսք՝
սոստիկ խնտալէն կը մարէին : Մանա-
ւանդ երոտր աչքերը խոշոր խոշոր բա-
ցած և ապշած կը դիտէր խուցին մէջ
գտնուած փառագզեատ պաշտօնակալ-
ները, արքունեաց տիկիները և օրհորդ-
ները . — Պուրկոյնի մարաջխան յառաջ
մատչելով իւր պաշտօնը կը կատարէ .

— Միթէ գմեղ չե՞ք ճանչար, ըսաւ,
Վեհափառ Տէր . արդեօք Բարձրութիւ-
նը ատարօրինակ երազ մը տեսեր է : Ա-
հա ես եմ Պուրկոյնի մարաջխան :

Ուրիշ մ'ալ մօտենալով — Ես ալ
Ձեր դիւանապետն եմ, ըսաւ :

— Ահա ես ալ Ձեր շտեմարանապետն :

— Ես ալ Ձեր տան հազարապետն :

— Ահաւասիկ ես ալ Ձեր մատուա-
կապետն :

— Եւ մեկը ալ Ձեր Բարձրութեան
սպայներն ենք, ըսին անոյշ ձայնով
բազմաթիւ երիտասարդներ :

— Ահա ես ալ Ձեր սպարապետն :

— Եւ ես գնդապետ թնդանօթածիզ
զօրացդ :

— Ահաւասիկ մեկը դատաւորքս :

— Ես ալ Ձեր հանդերձապետն :

— Ահաւասիկ և ես ալ Ձեր Լա—Հէյ
քաղսքին արքունական պալատին հը-
րամանատարն :

Ամբողջ պաշտօնակալները Վիլլէմի
դիմացէն անցան, ամենայն յարգանք
իրենց պաշտօնը յայտնելով :

Արքունի օրհորդաց իշխանուհեաց
մին, Վիլլէմի մօտենալով իւր շքեղ ըզ-
գեստոյն՝ ըսաւ .

— Ես ալ Ձեր Վեհափառ Բարձրու-
թեան տիկինը չեմ :

— Ա՛հ... դու իմ ամուսինս, ըսաւ
եռանդեամբ հնակարկատն, ջանալով
միանդամայն կեղծել իր զարմացումը .
գեռ ես ամուսնացած չէի կարծեր զիս,
բայց այս ընտրութեանս վրայ ալ չեմ
զղտար :

Ամէնքն սկսան բարձրաձայն խնտալ
Վիլլէմի բացատրութեանց վրայ . իսկ
խեղճ երիտասարդն զրեթէ իրքզինքը
կը կորանցընէր այս փոփոխ և հակա-
ռակ զգացմանց ժամանակ, և գեռ չէր
համոզուեր որ ինքն է փիլիպպոս Գալն :

Ընդունայն տեղ կը ջանար համոզ-
ցնել թէ ինքն է Վիլլէմ . մերձակայք
անդադար կը կրկնէին թէ այսպիսի
խօսքերով պէտք չէ վշտացնէ իրեն
հաւատարիմ ծառաներուն սիրար . վեր-
ջապէս այնպէս միաբերան և ջերմ կեր-
պով զննքը Հոյակտայի կոմս կոչե-
ցին, որ ալ խեղճ երիտասարդ մարդուն
ըղեղր խառնակեցաւ, և մտքէն անցուց՝
որ իր առաջուան վիճակը գէշ յիշա-
տակ մը և կամ ձախող երազ մ'էր :

— Վերջապէս աղաղակեց, աւելի կը սիրեմ իշխան ըլլալ քան թէ հնակարկատ։ Բայց մինչև ցարդ ըսել է որ սաստիկ կերպով գիւթեալ էի, վասն զի կը կործէի որ երկայն ժամանակ ես էի ֆուրթ—ֆուրթ փողոցին անկեան հնակարկատն։ Արդ, կրկնեց, միթէ Վիլլէմ չեմ անուանուիր։

— Վե՛նապիսա Տէրն զմեզ կ'ուզէ վշտացընել, ըսաւ իշխանուհին։

— Արդ ես եմ, մեծաշուք, մեծազօր և ազնուագարմ փիլիպպոս ֆալք. դուքս Լոզիէի և Պուրկոյնի, կոմս Հոլանտայի, Ձէլանտայի, Ֆիանտրիոյ և Հէնոյի, և Պարոն Ֆրիզի Եթէ այս գործիս մէջ գիւթութիւն չկայ՝ շատ գերազանց բան է։

— Վսեմապիսայ իշխանն ըսաւ կը ճանչնայ ինքզինքը. սակայն այս առաւօտ իւր Բարձրութիւնը կ'ուզէ զբօսնուլ, ըսաւ յարգական ժպիտով Պուրկոյնի մարալխտան։

— Իրաւունք ունիս, ըսաւ Վիլլէմ բռնազբօս կերպով, մարդկային բնութիւնը շատ տկար է։ Արդ յիրաւի ես եմ Պուրկոյնի դուքսը, վասն զի դուք այնպէս կ'ըսէք։ Բայց ինչպէս ալ երեւակայած եմ որ ֆուրթ—ֆուրթի հնակարկատն էի։ Աւրեմն բոլոր այս պալատն իմն է։

— Միթէ Ձեր Բարձրութիւնն կը տարակուսի։

— Այս անկողինն ալ, Շատ փառաւոր անկողին է։ Այսպէս անուշ ամենին չէի քնացած։ Միթէ դուք ալ կը ճանչնաք՝ որ այս երիտասարդ օրիորդն իմ ամուսինն է։ Յիրաւի շատ շնորհալի է։

Գարձեալ սկսան ամէնքը խնտալ, և հազիւ իրենք զիրենք կը սանձէին։ Այն օրիորդը՝ որ զիշխանուհին կը ներկայացընէր,

— Մենք երթանք՝ ըսաւ, որպէս զի իր Բարձրութիւնն անկողինէն ելնէ։

Տիկնայք մեկնեցան։

— Ի՛նչ ոճով կը փափաքի զգեստաւորիլ այսօր իր Բարձրութիւնն, հարցուց ամենայն յարգանքօք մտօնելով։

անկողինն՝ արքունի հանդերձապետն։

— Ի՛նչ, հանդերձ։ Ընտրութիւն ընելու դժուարութիւն կը զգամ։ Տուր ինձի այն հանդերձը զոր զուն կը փափաքիս, միայն թէ ծակած չըլլայ։

— Իւր Բարձրութիւնը այս առաւօտ շատ զուարթ է։ Իւր ունեցած ամէն հանդերձները աղէկ վիճակի մէջ են։ Ձեր Բարձրութիւնն կը փափաքի իւր կապոյտ թաւշեայ և սկեզարդ հանդերձը, ըսաւ հանդերձապետն։

— Այո՛ պատրաստեցէք կապոյտ թաւշեայ սկեզարդ հանդերձն, ըսաւ հնակարկատն։

— Մետաքսեայ կարմիր գուլպաներդ, և նոյն գոյնով ծընկակապը։

— Ձեր ուզածին պէս ամենայն ինչ պատրաստեցէք։

— Մրածայր կարմիր կօշիկներդ։

— Եթէ կը փափաքիք։

— Մնուզեայ կարմիր բաճկոնդ։

— Յիրաւի, շատ փառաւոր պիտի ըլլայ։

— Մետաքսեայ խատուտիկ գօտիդ։

— Շատ աղէկ։

— Աւ ծիրանեայ երիզապատ զըլխարկդ։

— Թէ որ ձեր աչաց հաճոյ է, աղէկ։ — Պատարագի ներկայ գտնուելու ժամանակ ի՛նչ վերնազգեստ կը փափաքիք։

— Յայսմ մասին անտարբեր եմ։

Յետ այս ամէն կարգաւորութեանց, չորս ազնուական սպաներ բերին այս ամէն հանդերձանքը մետաքսեայ բարձրու վրայ զետեղուած, և պատրաստուեցան զՎիլլէմ զգեստաւորելու։

— Թողուցէք զիս, աղաղակեց Վիլլէմ, կարծէք թէ զիս զգեստաւորելու ուժ չունիմ։

— Ձեր Բարձրութիւնն այսպիսի սովորութիւն չունէր, ըսաւ արքունի հանդերձապետն։ Բայց թերեւ այժմ հիւանդացած ըլլաք. այլ նոյն իսկ այն ատեն Ձեր հաւատարիմ ծառաներն պէտք են կրկնապատկել իրենց սովորական խնամքը։

Թէպէտ և շատ վշտացաւ Հոլանտայի

կունար, բայց յանկարծակի գալով ստի-
պուեցաւ թողլու՝ որ սպաները և պաշ-
տօնակալները զգեստաւորեն զինքը :
Սակայն ալ նոյն իսկ այս ժամանակ,
յայտնի կը տեսնուէր՝ որ վիլլէմ միշտ
կը պատերազմէր իր ներքին նախապա-
շարմանց գէմ : Կը զննէր և կը քննէր՝
թէ արդեօք դեռ ևս կաշի և կամ ներկ
կը հոտի ձեռքերէն, բայց այլ ևս չէր
գտնէր : Դէպքին վրայ նորանոր և յա-
ջորդական զմայլումներ կը դրոշմուէին,
զորս չէր համարձակեր այլ ևս արտաք-
այտնել, մանաւանդ երբ կը տեսնէր
որ զինքը ռուկով և գոհարներով կը
զարդարէին : Երբ զգեստաւորեցաւ,
զարմացան հանդիսատեսք, տեսնելով
որ իշխանն հայեւոյ դիմաց անցնելով՝
սկսաւ շտկել ինքզինքը, և այլանդակ
ճաշակով յարդարել մազերն և զգեստ-
ները : Վերջապէս բոլորովին զարդա-
րուելէն վերջը, սկսաւ իրեն պէտք և
ղած բաներն ուզել, բայց միշտ խո-
նարհ բարեսիրութեամբ մը կը խօ-
սէր առ պաշտօնակալս :

Պաշտօնակալներն առաջնորդեցին
զինքը ճաշոյ դահլիճը, ուր ամենազնիւ
և համադամ նսխածաշ մը պատրաս-
տուած էր : Իշխանն այնպէս դրգոսե-
ցաւ ազնիւ կերակուրներէն և փրփրա-
լից գինիէն, որ այլ ևս չհրատարեցաւ
իր Հոյակնտայի Կունս տիտղոսէն, և
թողուց որ զինքն այնպէս կոչեն :

Նախածաշէն վերջը, փափաքեցաւ
իշխանն շրջադայութեան ելնել իւր
ոսկեզարդ զգեստներով, և հանդիսաւոր
կերպով շրջագայիլ լա-Հէյ քաղաքին
փողոցները : Բայց իրեն յայտնեցին յար-
դանօք՝ որ այն ատեն պէտք էր պատա-
րագի ներկայ գտնուիլ, և իսկոյն զինքը
առաջնորդեցին արքունական մատու-
ռը, որոյ երեք խորանիկները շատ փա-
ռաւոր էին : Մին նուիրեալ Սուրբ Աս-
տուածամանի, միւսն Սրբոյն Պետրոսի,
իսկ երրորդն Սրբոյն Անդրէի : — Վիլլէմ
թէպէտ շատ գէշ սովորութիւններ ու-
նէր, բայց միշտ կրօնական զգացմունք-
ները վառ պահած էր իր սրտին մէջ,
և միշտ կը կատարէր իր քրիստոնէս-

կան պարտքերը : նոյն ատեն ալ սկսաւ
խոնարհաբար աղօթել :

Բայց տասներորդ ժամուն իշխանն
աւելի չփոթեցաւ, երբ առաջնորդե-
ցին զինքը՝ ատեանին դահլիճը, իմա-
ցաւ որ պէտք էր դատաստանի նստիլ
և վճիռ հատանել :



Երբ զահին վրայ բազմեցաւ, ներ-
կայացուցին իրեն այլ և այլ դատաս-
տանական իրեր և դատախազներ :

Հնակարկատ իշխանն այնպիսի հա-
մարձակ համարձակ վճիռներ տուաւ՝
որ թէ ֆիրիպոս Գալն և թէ իւր ար-
քունիքն զարմացան : Այն ժամանակ
անձ մը ներկայացուցին, որ Շէվլինկի
փողոցին անկեան գինետան տիրոջը
կողմանէ կը պահանջէր 11 ֆիորինի
զուամարը, հնակարկատ գինովէ մը, որ
կը կոչուէր վիլլէմ :

— Այո, կը ճանչնամ, ընդհատեց
դատաւորն, այն երիտասարդը : Բայց
պէտք չէ որ դուն ալ զինքը գինով հա-
մարիս : Եթէ չէ վճարած՝ յայտնի ա-
պացոյց մ'է՛ որ ամենին միջոց չունի :
Ես այն խեղճ երիտասարդին բարիք
կը փափաքիմ : Ո՛ր է դանձապետս :

— Ահաւասիկ եմ, ըսաւ, մօտենա-
լով ծեր ազնուական անձ մը :

— Շատ լաւ, կրկնեց վիլլէմ, չնորհք
ըրէ վճարէ պահանջուած 11 ֆիորինը,
և ազատէ այն խեղճը : Եւ քանի որ հոս
ես, կ'իմացընեմ որ Քուրթ-Փուլթ փո-
ղոցին մէջ վիլլէմ անուամբ բարեկա-
միս երկու հարիւր փայլուն ֆիորին
խրկես :

— Չբարձրութիւնն կը փափաքի
զուարճանալ, ըսաւ յարգալիք ծան-
րութեամբ դանձապետն, իրեն բարե-
կամը կոչելով հնակարկատ մը :

— Ինչ որ ըսի՝ շատ աղէկ զիտեմ,
կրկնեց վիլլէմ : Եւ նաև տար իրեն 25
շի՛՝ այն ազնիւ ճերմակ գինիէն՝ որ
այս առաւօտ խմեցի : Բաժս ճշդիւ կա-
տարէ, և մենք ալ ճաշի երթանք :

Իմացուցին իրեն որ ճաշու ժամանա-

կը ցորեկն է: — Յետոյ իրեն առջևը բե-
րին շատ մը ստորագրութեան թղթեր:
Բայց ափսոս, խեղճ երիտասարդ հնա-
կարկատն գրել չէր գիտեր:

— Ի՞նչ կը խնդրէք, ըսաւ, արքունի
գանձապետին:

— Կը խնդրենք որ Ձեր վեհօփա-
ռութիւնը ստորագրէր այս թղթերը:

— Ձեռաց յղացաւութիւն կը զգամ
այնպէս սաստիկ՝ որ և ոչ գրիչ կրնամ
բռնել, ըսաւ վարպետութեամբ Վիլլէմ:
Եթէ կարելի է իմ կողմանէս ստորա-
գրէիր, թէ որ շատ հարկաւոր է. ապա
թէ ոչ ուրիշ օրուան կը թողունք: Սա-
կայն միշտ կը փափաքիմ որ ստորա-
գրութենէ առաջ կարդացուին թղթե-
րը, վասն զի իշխան մը՝ եթէ չեմ սխա-
լիր, պէտք է գիտնայ ստորագրութեան
համար՝ թէ թղթին մէջ ինչ կը պա-
րունակէ:

Կարդացին այլ և այլ շնորհագիր-
ներ, որոնցմով ազնիւ գուքսն ազքատ
մարդկանց փոքրիկ մշանջնաւոր թո-
շակ կը շնորհէր:

— Աւելցուցէք, ըսաւ Վիլլէմ, հա-
րիւր ֆիօրին թոշակ վերի յիշած բա-
րեկամիս:

— Ո՞ր բարեկամը կը փափաքի թո-
շակաւորել Ձեր Բարձրութիւնն:

— Շատ լաւ կը ճանչնաք զինքը,
Վիլլէմ հնակարկատն, որ Գուրթ-Փուլթ
փողոցը կը նստի:

— Շատ բարի անձ է, ըսաւ Փաջն
ֆիլիպպոս, այո՛, պիտի ստանայ այս
թոշակը:

Յետոյ մեծ ուրախութեամբ յայտ-
նեցին իրեն՝ որ ճաշը պատրաստ է:
Վիլլէմ ննջէն առաջ հարցուց թէ ար-
դեօք վճարած էին 11 ֆիօրինը: Իս-
կոյն հատուցման թուղթը ներկայացու-
ցին իրեն:

— Եւ նաև երկու հարիւր ֆիօրինը՝
որ խրկեցի խեղճ Վիլլէմին, հանդերձ
25 շիշ ճերմակ զինիէն, անոնք ալ զըր-
կեցիք

— Ամենայն ինչ կատարեցաւ՝ ըստ
Ձեր հրամանացը, պատասխանեց գան-
ձապետն:

Եւ ցրցուց ընդունագիր մը երկուս-
տարդին մօրմէն: — Կ'երևի թէ Վիլ-
լէմ ստորագրել չի գիտեր, ըսաւ:

Հնակարկատն շատ կարմրեցաւ եր-
բոր ընդունագրին թուղթը իրեն զի-
մացը բերին: Վայրկեան մը մտքով ըզ-
բաղած երեցաւ, բայց իսկոյն մերժեց
մտաց խորհուրդը, հանդարտեցաւ և
գնաց սեղան:

Ճաշը աւելի ախորժելի եղաւ՝ քան
զնախաճաշիկը. Վիլլէմ խելքը միտքը
բողոքովին ճաշի տուաւ: Եւ շատ ուրա-
խացաւ նաև զկոտորվիլ հոն գտնելուն
համար, այն իշխանուհին՝ որ Վիլլէ-
մի կինը ձևացած էր և կը ներկայա-
ցընէր զիշխանուհին իզապէլլա: Վիլ-
լէմ շատ ազնուութեամբ կը խօսէր կո-
տորվիլի հետ, կամ նորա իշխանական
կերպէն և կամ զդեստուոց ճոխութե-
նէն ակնածելով: Եւ այնպիսի յարգանք
կը բանեցընէր՝ որ ձեռքը սեղմելու ան-
գամ չէր համարձակուր:

Ճաշէն վերջը, որ շատ երկայն տևեց,
պարահանդէս մը ալ աւելի զարմացուց
զՎիլլէմ. գրեթէ զիւրեքալ էր այնպի-
սի ընկերութենէն, ճոխութենէն, եւ
բաժնուկութենէն, ներդաշնակ, անոյշ,
բարակ և ազգու ձայներէն, և նաև ա-
նուշահոտ բուրմունքէն որ բովանդակ
սրահը տիրեր էր: Բայց ամենէն աւե-
լի՛ իր ուշադրութիւնը կկորոնացեր էր
կոտորվիլի վրայ, և այնչափ խնամք և սէր
կը ցուցընէր որ կոտորվիլ շատ զարմա-
ցաւ:

Ժամը երեկոյեան եօթնին Վիլլէմի
զարմանաց վերջին կէտը հասաւ, երբ
առաջնորդեցին զինքը այն սենեակը,
ուր սեղաններու վրայ կը փայլէին զեզե-
ցիկ գունով հապուազիւտ ծաղկի փուն-
ջեր, և ամենախորտ անուշներ և խմո-
րեղէններ: Խեղճ Վիլլէմ զատոնք և ոչ
իսկ երազի մէջ տեսեր էր:

Նախընթաց ճաշի ժամանակ՝ գինին
չափաւոր քանակաւ մատուակեք էին
խեղճ իշխանին: Իսկ արդ. Փաջն ֆի-
լիպպոս կատարելապէս զուարճանա-
լով, սկսաւ ալ իր ծածուկ խորհուրդ-
ները՝ ի դորձ գնել: Դարձեալ այնպէս

վարպետութեամբ սկսան խմբընել զօրաւոր և ազնիւ բաժակներ՝ որով խեղճ վիլլէմ՝ այնպէս սաստիկ գինովցաւ՝ որ դարձեալ նախընթաց գիշերուան պէս սկսաւ խոր քնանալ, և մեծաձայն խորդալ: Քաջն փիլիպպոս ալ ճիշդ այս ժամուս կը սպասէր: Հրամայեց, և իսկոյն դարձեալ լծուառական վիլլէմի հազցուցին իւր հնակարկատի ըզգեստը, և պատուիրեց՝ որ տանին ճիշդ այն տեղը՝ ուսկից նախընթաց իրիկունը գտեր էին զինքը: Իշխանուհին՝ որ շատ զուարճացեր էր, խեղճ վիլլէմի վրայ զթճացաւ, և հրամայեց որ գէթ զվիլլէմ իր տունը տանին և անկողնոյ մէջ հանգչեցընեն: Իշխանուհւոյն խօսքը կատարեցին: Յետ զվիլլէմ զգեստաւորելու, Յովհաննէս տը Պէրկ և Ժաքօթ տը Ռուսէ՝ փոխելով իրենց պաշտօնական զգեստը, տարին զվիլլէմ ՚ի փուրդ-փութ: Իր պառաւ մայրը արթնցուցին:

— Ահաւասիկ քու որդիդ, ըսին, զոր ծառի մը տակը գտանք, և շալկեցինք քեզի բերինք:

Այս ըսելով գրին զվիլլէմ իր խըտեկին մէջ:

— Շատ շնորհակալ եմ, մարդասէր պարոնայք, ըսաւ պառաւն. անշուշտ դարձեալ գինովցած պիտի ըլլայ: Մէկ ու կէս օր է որ տուն չէ հանդիպած:



Թաջորդ օրը վիլլէմ արթնցաւ՝ արեւ գական ծագելէն մէկ ժամ վերջը, իր անակին խեղճ անկողնոյն մէջ:

Առջի օրուան բարեբախտ զարմանքըն՝ նոյն վայրկենին փոխուեցաւ խորին տրտմութեան. — մարդս շատ դիւրաւ կը վարժի երջանիկ կենաց: — Սակայն սկսաւ երկայն բարակ շփել աչքերը, կը փնտռէր իր ոսկեզարդ զգեստները և անկողնոյն մետաքսեայ վարագոյրները: Կոչեց իր սենեկապանը, հանդերձապետը, և բոլոր միւս ամէն պաշտօնակաշները, իր շքեզազարդ սպանները և սիրելի ամուսինը: — Բայց այս ամե-

նայն ինչ կը զարմացընէր իր պառաւ մայրը: — Սկսաւ ուշադրութեամբ զըննել իր անակին ծխոտեալ և սևացեալ գերանները, և ընդունայն տեղ պատեւրուն վրայ կը փնտռէր դեղեցիկ որմնանկարները, և կոմսին պալատին աւարական զարդերը: Վերջապէս մէկ ժամ տխրութենէն վերջը, ճանչցաւ որ ինքն էր վիլլէմ հնակարկատն, ոչ իշխան էր այլ ևս, ոչ դոքսս և ոչ կոմս: Դարձեալ հասկըցաւ որ իր սիրելի իշխանուհին պարզ երեսակայութիւն էր, և որպէս զի մօրը զարմացումը դադարեցընէ, ըսաւ որ շատ գեղեցիկ երազ մը տեսայ:

Բայց միշտ տխուր էր. շատ արցունք թափեց՝ մտածելով այն փառաւորութիւնը, զոր քանի մը վայրկեան վայելեր էր. իր ամէն տեսածին վրայ գրեթէ ողբաց. բայց վերջապէս անկողնէն ելաւ:

Հազիւ թէ օտրի վրայ ելեր էր, զրացիններ իսկոյն հնացեալ կօշիկներ բերին կարկատելու համար:

— Այն ատեն խենթ եմ՝ ըսել է. արդ կը տեսնեմ որ ես եմ վիլլէմ:

Գնաց ընդգրկեց զմայրը:

— Թողութիւն ըրէ եթէ անխելք բացատրութիւններ ըրի, Բայց ճիշդ ըսելով՝ աշխարհիս վրայ այսպէս երջանիկ երազող չէ եղած:

— Ըսէ արդ, որդեակ, երէկ ամբողջ օրը ուր անցուցիր:

— Բնաւ չեմ յիշեր:

Պիտի սկսէր իր զլխէն անցածը մօրը պատմել, երբ տանը անկիւն մը շարուած տեսաւ 25 շիշ, որք յիշեցուցին իրեն իր իշխանական կենաց մէկ պատահարը:

— Ուսկից եկան այս շիշերն, հարցուց վիլլէմ:

— Ո՛հ, տէր Աստուած, այս շիշերը 25 հատ են, որք կը պարունակին արքունեաց ազնիւ գինիէն՝ զոր խրկեց Բարեւախրս դոքսն փիլիպպոս, — որոյ Աստուած երկայն կենանք շնորհէ, — հանդերձ Շէվինկի պանդոկին պարտքիդ վճարմամբ. և աւելի զարմանալի բան,

այս շիշերուն հետ խրկեր էր նաև երկու հարիւր փայլուն ֆիօրին:

Վիլլէմ այս խօսակցութեանց ժամանակ գոյնը փոխեր էր և կը դողար:

— Ես այս ըսածէդ բան չեմ հառկընար. ես եմ վիլլէմ և չեմ, ես եմ Հոյակաւայի Կոմս և խեղճ հնակարկատ մը: Խեղք կորսնցընելու բան... Բայց գոնէ այս գինւոյն համն առնուիք:

Առանց դիտելու՝ որ իր խօսքերն ու մտաց խռովութիւնը անհանդիստ կ'ընէին իր մայրը, խմեց լի բաժակ մը:

— Ճիշդ երէկուանին համն ունի, ըստ հառաչանօք: Մի վախնար մայրիկ, դեռ չեմ փախուցած բողբոլիին: Բայց ինձի հարցուցիր թէ երէկ ինչ ըրիր. ստուգիւ կ'ըսեմ՝ դիւթեր էին զիս, վասն զի այս շիշերը խրկողն ես եմ... Ո՛հ, ֆիսա չունի. երկու հարիւր փայլուն ֆիօրին և 25 շիշ գինի... Գեշ բան չէ. երանի թէ այսպիսի դիպուածներ ստէպ ստէպ պատահին:

Խեղճ մայրը կարծեց որ տղան փախուցեր է անօթութենէ: Ուստի փութաց շուտով կերակուր պատրաստեց, զոր ճաշակելով վիլլէմ և քիչ մ'ալ արքունեաց զինիէն խմելով՝ հանգստացաւ: Սակայն վիլլէմի բերնէն այնպէս տարօրինակ իմաստներ կ'ելլէին, որ նոյն իրիկուընէ բոլոր դրացիք զինքը խենթի տեղ դրին. իսկ ինքն միշտ իր անցեալ փառաւոր յիշատակաց հետ կը մարտնչէր. բայց այս ամէն բանին մտաց հանդուցիչ պատճառ մը չէր կրնար գտնել:

Փանի մ'օր վերջը՝ վիլլէմի միտքը եկաւ՝ իւր հարիւր ֆիօրին թոշակն. զի երազին մէկ մասն էր նաև այս, և շատ զարմացաւ որ խօսք չկար ասոր վրայ:

Նոյն օրերը ձայն ելաւ որ իշխանն և պալատականը պիտի վերադառնան. որք վիլլէմի երազէն չարաթ մը վերջը պիտի մեկնէին դէպ 'ի Ֆրիդ: Վիլլէմ արքունեաց ընդ առաջ վազեց, և քաջին ֆիլիպպոսի արքունեաց անձինքներէն շատին ծանօթ դէպքը տեսնելով՝ դարձեալ իր մտաց անհանգստութեան մէջն ինկաւ:

Կիրակի էր օրն, երբ վիլլէմ զնայ արքունեաց մատրան առջև հոն պատարագէն վերջը դէմընդդէմ հանդիպեցաւ կոտորվիլ: Երբ տեսաւ զինքը՝ սկսաւ դողալ, և որոշ հասկըցաւ որ այլ ևս չէր խարուած: Այնպէս իրեն երեցաւ որ կոտորվիլ ալ զինքը ճանչցաւ և կարմրեցաւ: Բայց վիլլէմ չհամարձակեցաւ խօսելու իշխանուհւոյն հետ. զոհ եղաւ միայն չափաւոր հեռաւորութեամբ ետեէն երթալու՝ մինչև պալատին սանդուխները:

Հազար տեսակ անորոշ խորհուրդներ պաշարեցին վիլլէմի ըզեզը:

— Ուրեմն ըսել է թէ տեսածս պարզ երևակայութիւն չէ, և ստուգիւ ես կախարդի մը ազդեցութեան ներքե կըսած պիտի ըլլամ:

* *

Յոյսնի է թէ կոտորվիլ պատմած պիտի ըլլայ իզապէլլա իշխանուհւոյն այս դէպքս, և իշխանուհին ալ ֆիլիպպոսի: Իշխանն այնչափ զուարճացեր էր՝ որ անկարելի էր զվիլլէմ մոռնար: Նոյն ատեն յիշեց՝ որ խեղճ հնակարկատին խոստացեր էր փքրիկ թոշակ մը, և դեռ զայն չէր կատարած: Հրամայեց որ զվիլլէմ իրեն առջևը ներկայացընեն:

Շուտով դտան զվիլլէմ պալատին սանդուխներուն յենարանին յեցեալ:

Փիլիպպոս Բաշն հրամայեց որ պարտոցընեն զվիլլէմ այն ամէն սրահներուն մէջ ուր ինքը միօրեայ իշխանութիւն գործածեր էր: Վիլլէմ ամէն բան անվրէպ ճանչցաւ և այնպէս միամիտ դարմանք մը ցըցուց, որ ֆիլիպպոս դրիթէ առջի անգամուան չափ զուարճացաւ:

Այն ժամանակ՝ հրապուրիչն կոտորվիլ դարձեալ իր իշխանուհւոյ զգեստները հագուեր էր: Վիլլէմ հազիւ թէ զինքը տեսաւ, աղաղակեց.

— Ո՛հ, եթէ դարձեալ պիտի յափըշտակէք, աւելորդ տեղ զինքը միցուցընէք ինձի:

Այս պարզ և սիրալիր բացատրու-
թիւնն՝ կարծես թէ մեծ ազդեցութիւն
ըրաւ օրիորդին մտաց վրայ: Վիլլէմ
ալ այնչափ կոշտ և տգեղ չէր, այլ ու-
նէր յանկուցիչ շարժուածքներ:

Վիլլէմ այս ժամանակ խորասոյղ ըն-
կաւ իր մտաց տխուր մտածութեանց
մէջ, և կամաց կամաց կ'ըմբռնէր բո-
վանդակ երազը. քաջն ֆիլիպպոս զին-
քը դիտելով՝ ըսաւ ժպտելով.

— Արդ, քու տնակէջ աւելի կ'ախոր-
ժիս բնակիլ այս պալատին մէջ:

— Ո՛հ... Տէր իմ... կրկնեց թոթո-
վելով Վիլլէմ, կարծես կայծակէ զար-
նուած:

— Շատ լաւ, կրկնեց իշխանն, ասկեց
վերջը կրնաս բնակիլ այս պալատին մէջ,
և մեր հանդերձապետն կը հաստատէ
զքեզ սենեկապանի պաշտաման մէջ:

Վիլլէմ ուրախութեամբ աչքերը դար-
ձուց հանդերձապետին վրայ, և քանի
մը քայլ հեռացաւ զարմացմամբ, ճանչ-
նալով այն անձը՝ որ իր իշխանութեան
օրը ներկայացուցեր էր իրեն կայսրոս
թաւչեայ ոսկեղարդ զգեստը:

— Իսկ այս օրիորդն, ըսաւ դուքսն,
ցուցընելով զկոտորվիլ, եթէ կը փափա-
քի՝ կը հաւանինք որ ամուսնանայ քե-
զի հետ:

— Գիտնալով որ կոտորվիլ կը հա-
ւանի, ըսաւ իշխանուհին Իզապէլլա,
իրենց իբրև օժիտ իմ կողմանէս երկու
հազար ֆիօրին կը շնորհեմ. իսկ դու
Տէր իմ, կը յուսամ որ կը կրկնապատ-
կես այս գումարը:

— Չեմ կրնար ժխտել փափաքածդ,
Տիկին, ըսաւ դուքսն:

Կոտորվիլ այն ատեն կարկառեց իր
փափուկ ձեռքը՝ սարսափած Վիլլէմի:
Շուտով իր աստիճանին համեմատ ըզ-
գեստաւորեցին զՎիլլէմ:

Սկսեալ այս օրէս՝ միշտ պալատին
մէջ կը բնակէր: Այս խօսակցութենէն
երկու շաբաթ վերջը, արքունական
մատրան մէջ պսակուեցաւ Վիլլէմ իր
սիրելի կոտորվիլի հետ:

Վիլլէմ այսչափ փառօք շրջապա-
տեալ տեսնելով ինքզինքը՝ արբեցու-
թեան շար ունակութիւնը բոլորովին
թողուց, և առաքինի ու հեղահամարյր
բարք մը ստացաւ:

Եւ երբ Վիլլէմ կը պտըտցընէր մե-
ծամեծ անձինքը՝ Լա-Հէյի արքունա-
կան պալատին մէջ, ժպտելով կ'ըսէր
մերձակայից. Էս այս սրահներուն մէջ
միօրեայ իշխանութիւն գործածեր եմ:

ԿՈՒԼԵՆ ՏԵ ՊԼԵՏԻ

